

Երկրորդ քաղաքն է Ագոլսոս կամ Ասոս՝ Փղըշտացւոց երկրին հինգ մայրաքաղաքներէն մին . հին բնակիչներն էին Ենակիւմ հսկաները : Մակարեան եղբայրները հոն մեծ քաջագործութիւններ կատարեցին : Ազովտոս քրիստոնեայ դառնալով՝ առաջին դարերուն եպիսկոպոսական աթոռ ունեցաւ . բայց աւելի առաջ, ան ընդունած էր առաքեալներու քարոզութիւնը, այնպէս որ 38 թուականին, Աստուծոյ հոգին Փիլիպպոս սարկաւազ փոխադրեց այս քաղաքը Եթովպիոյ տիկնոջ Կանդակայ ներքինին մկրտելէ վերջ . «Հոգին սուրբ եկն ի վերայ ներքինւոյն, և հրեշտակ տեառն յափշտակեաց զՓիլիպպոս . եւ ոչ եւս ետես զնա ներքինին, և զնայր զճանապարհ իւր ուրախութեամբ : Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս և շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն մինչև ի գալ նորա ի Կեսարիա» (Գործք. Ը. 39-40) : Իր առաջին եպիսկոպոսն էր Սիղուանոս՝ որ 325 ի Նիկիոյ ժողովին ներկայ էր, և վերջինը՝ Ղազար, որ 536 ի Երուսաղէմի սինոդին մասնակցեցաւ : Եւսեբիոսի ըսածին նախելով՝ Ազովտոս կարևոր քաղաք մը եղած էր, բայց արաբներու արշաւանքին պատճառաւ մեծապէս անշքացաւ, այնպէս որ Սաչակիրները ամայացած գիւղ մը միայն գտան հոն (Bar. gd. էջ 504) :

Երուսաղէմ-Պազա ճանապարհին վրայ կը գտնուէր Eleutheropolis քաղաքը : Տիւրոսի եպիսկոպոս Տորոթէի համաձայն, Սիմէոն առաքեալն է որ հոս Ս. Աւետարանը քարոզած է և յետոյ մեկնած Պազա եւ Եգիպտոս : Մինչև 636 թուականը, այս քաղաքին եկեղեցին կառավարող եպիսկոպոսներուն ցանկը շինած է Le Quien : Ան ունեցած է նշանաւոր մարտիրոսներ, ի մէջ այլոց, Ալփէոս և Պետրոս Աբսիլմոս,